

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Նկարում n° թվով է նշված հարավային ցուրտ ջերմային գոտին.




- 1) 4
- 2) 5
- 3) 1
- 4) 2

2 Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 2 500 000
- 2) 1 : 25 000 000
- 3) 1 : 25 000
- 4) 1 : 250 000

3 Նկարում \varnothing կետը հորիզոնի n° թ կողմում է.

- 1) հարավարևմտյան
- 2) հարավարևելյան
- 3) հյուսիսարևելյան
- 4) հյուսիսարևմտյան



4

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Միջօրեականներն իրար հավասար են:
- 2) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է Գրինվիչի միջօրեականով:
- 3) Երկիրը սեփական լույսը ստանում է Լուսնից:
- 4) Իր առանցքի շուրջը Երկիրը պտտվում է 1 ժամում:

5

Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում է կործանիչ ալիք, որը կոչվում է.

- 1) ցունամի
- 2) մակընթացություն
- 3) տեղատվություն
- 4) ցիկլոն

6

Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոթերմ
- 2) իզոհիպս
- 3) իզոբար
- 4) իզոբար

7

Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) աշխարհագրական թաղանթ
- 2) ջերմաստիճանային շրջադասություն
- 3) վերընթաց գոտիականություն
- 4) հորիզոնական գոնայականություն

8


Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը – 14° է, իսկ նույն պահին ստորոտում + 4°: Օդի ճնշումը գագաթին 380 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել 6°-ով).

- 1) 395 մմ
- 2) 680 մմ
- 3) 80 մմ
- 4) 365 մմ

9

Նկարում Ա տառով նշված է Երկրի.


- 1) թույլլուրտը
- 2) երկրակեղևը
- 3) միջուկը
- 4) միջնապատյանը



10

Նկարում պատկերված է.

- 1) ցերեկային բրիզ
- 2) ձմեռային մուսսոն
- 3) ամառային մուսսոն
- 4) գիշերային բրիզ



11

«Հարթավայր — աշխարհամաս» գույգից ընտրել *սխալը*.

- 1) Հյուսիս-Գերմանական — Եվրոպա
- 2) Լենքորանի — Եվրոպա
- 3) Միջագետքի — Ասիա
- 4) Դեկանի — Ասիա

12

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.

- 1) անապատը
- 2) տունդրան
- 3) սավաննան
- 4) տափաստանը

13

Բնութագրումով որոշել թերակղզին.

Այդ թերակղզին Հարավային Եվրոպայում է: Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան, արևելյանը՝ Ադրիատիկ ծովերի ջրերը: Հարավում այն նեղուցով անջատվում է Սիցիլիա կղզուց: Ո՞ր թերակղզին է.

- 1) Բալկանյան
- 2) Փոքր Ասիա
- 3) Պիրենեյան
- 4) Ապենինյան

14

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ զրոյական միջօրեականն է;
- 2) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
- 3) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 4) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արկտիկական և անտարկտիկական օդային զանգվածները չոր են, ցուրտ և շատ թափանցիկ:
- 2) Մերձհասարակածային կլիմայական գոտի ամռանը թափանցում են արևադարձային չոր ու շոգ, իսկ ձմռանը՝ բարեխառն խոնավ և մեղմ օդային զանգվածները:
- 3) Հասարակածային կլիմայական գոտում օդի ջերմաստիճանը միշտ բարձր է, իսկ տեղումների քանակը՝ շատ:
- 4) Արևադարձային օդային զանգվածներն ունեն վարընթաց շարժում. իջնելիս տաքանում են և չորանում:

16

«Լիճ — թափվող գետ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կասպից — Վոլգա
- 2) Տիտիկակա — Ամազոն
- 3) Մեծ աղի — Կոլորադո
- 4) Վանա — Եփրատ

17

«Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Օրինկո — ամառ
- 2) Նիգեր — ձմեռ
- 3) Տիգրիս — ձմեռ
- 4) Յանգզի — գարուն

18

Ավստրալիայում ամենաշատ խոնավություն ստանում է (են).

- 1) մերձհասարակածային գոտին՝ հասարակածային մուսսոնների տեսքով թափանցած պասսատների շնորհիվ
- 2) Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լեռնալանջերը
- 3) Էյր լճի ավազանը
- 4) մայրցամաքի ներքին շրջանները

19


Ո՞ր կղզիներն են քարտեզում նշված Դ տառով.

- 1) Բերմուդյան
- 2) Մեծ Անտիլյան
- 3) Փոքր Անտիլյան
- 4) Ֆոլկլենդյան

20

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Լիմա
- 2) Սանտյագո
- 3) Մոնտեվիդեո
- 4) Բուենոս Այրես



21

Բնակչության աշխատունակ մասը, աշխատող մեծահասակներն ու երեխաները, որոնք իրենց ֆիզիկական կարողություններով, գիտելիքներով և փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ բնագավառում, կոչվում է.

- 1) աշխատանքային ռեսուրս
- 2) տնտեսապես ակտիվ բնակչություն
- 3) ժողովուրդ
- 4) ռասա

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ցրված տարաբնակեցումն առավել տարածված է ագարակային (ֆերմերային) գյուղատնտեսություն ունեցող երկրներում:
- 2) Ժողովրդագրական գործոնը տարաբնակեցման վրա չի ազդում:
- 3) Տարաբնակեցումը որոշակի տարածքում ձևավորված արտադրական ձեռնարկությունների ամբողջությունն է:
- 4) Քոչվոր տարաբնակեցումն առկա է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում:

23

Բնութագրումով որոշել պետությունը.

Գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.

- 1) Իրան
- 2) Բրազիլիա
- 3) Չինաստան
- 4) Ավստրալիա

24

Երկրի բնակչության թիվը 20 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 5 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 50 %
- 2) 75 %
- 3) 20 %
- 4) 35 %

25

«Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) տաջիկ — թուրքական
- 2) անգլիացի — գերմանական
- 3) ուկրաինացի — սլավոնական
- 4) իսպանացի — ռոմանական

26

Տրվածներից *ո՞րը* ցամաքային սահման ունի միայն մեկ երկրի հետ.

- 1) Իսպանիան
- 2) Պերուն
- 3) Կանադան
- 4) Հունաստանը

27

Թելատու տեխնիկական մշակաբույսեր են.

- 1) բամբակենին և վուշը
- 2) գարին և բրինձը
- 3) արևածաղիկը և ցորենը
- 4) սոյան և ձիթապտուղը

28

Ճապոնիայի վերաբերյալ *ո՞ր* պնդումն է *սխալ*.

- 1) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը բրինձն է:
- 2) Բնակչության սննդակարգի մեջ մեծ է ձկան ու ծովային մթերքների բաժինը:
- 3) Մեքենաշինության ճյուղային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նավաշինությունը, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական մեքենաշինությունը:
- 4) Սև մետաղների հումքի աղքատ պաշարների պատճառով երկրում զարգացած չէ սև մետաղաձուլությունը:

29

Բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների բաժինը համեմատաբար մեծ է.

- 1) Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում
- 2) Թուրքիայում և Հունաստանում
- 3) Չինաստանում և Հնդկաստանում
- 4) Իրանում և Պակիստանում

30 **Բացարձակ միապետություններ են.**

- 1) Իսպանիան և Ճապոնիան
- 2) Գերմանիան և Ավստրալիան
- 3) Ռուսաստանը և Ֆրանսիան
- 4) Սաուդյան Արաբիան և Բրունեյը

31 **Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.**

- 1) Հնդկաստանը և Շրի Լանկան
- 2) Ուգրեկստանը և Թուրքիան
- 3) Կոլումբիան և Ինդոնեզիան
- 4) Ֆրանսիան և Հունաստանը

32 **«Գետ — ավազան» գույգերից ընտրել սխալը.**

- 1) Արաքս — Կասպից ծով
- 2) Կուր — Միջերկրական ծով
- 3) Եփրատ — Պարսից ծոց
- 4) Ճորոխ — Սև ծով

33 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Մարգագետնատափաստանային հողերը հումուսով հարուստ են:
- 2) Լեռնաանտառային գորշ հողերը հումուսով ավելի հարուստ են, քան կիսաանապատային գորշ հողերը:
- 3) Լեռնային սևահողերում հումուսի պարունակությունը 1–2% է:
- 4) Կիսաանապատային գորշ հողերը հումուսով աղքատ են:

34 **Հայերը կազմում են ՀՀ բնակչության.**

- 1) 96 %-ից ավելին
- 2) 88 %-ը
- 3) 93 %-ը
- 4) 90 %-ը

35


ՀՀ տրանսպորտի բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է.

- 1) բեռների ծավալի և ուղևորների թվաքանակի աճով
- 2) տրանսպորտային նոր ուղիների արագ կառուցմամբ
- 3) փոխադրումների հեռավորության աճով
- 4) տրանսպորտային նոր միջոցների շահագործմամբ

36

Ո՞ր ջրամբարն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Սպանդարյանի
- 2) Շամբի
- 3) Տոլորսի
- 4) Կեչուտի



37

Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Եղեգնաձոր
- 2) Վայք
- 3) Վեդի
- 4) Ջերմուկ

38

Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Սաուդյան Արաբիան և Իրաքը
- 2) Ուկրաինան և Հայաստանը
- 3) Ճապոնիան և Չինաստանը
- 4) Բրազիլիան և Կանադան

39

Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր է.

- 1) լեռնային ապարների քայքայումը
- 2) փոշեհողմը
- 3) հրաբուխը
- 4) ավտոտրանսպորտը

40

Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու Երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.

- 1) ջերմաստիճանի տատանման լայնույթ
- 2) ջերմոցային տնտեսություն
- 3) ջերմոցային էֆեկտ
- 4) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)

41

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- | | |
|-------------|------------|
| 1) Նիզեր | 5) Մեկոնգ |
| 2) Սիրդարյա | 6) Ջամբեզի |
| 3) Մուրեյ | 7) Տիգրիս |
| 4) Ինդոս | 8) Օրանժ |

42

Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին.

- | | |
|--------------|-------------|
| 1) Լիտվա | 5) Գերմանիա |
| 2) Ուկրաինա | 6) Ֆրանսիա |
| 3) Ռուսաստան | 7) Կանադա |
| 4) ԱՄՆ | 8) Նորվեգիա |

43

Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի լեռնագրական միավորների համարները.

- | | |
|-------------------|---------------------------|
| 1) Թոնդրակ լեռ | 5) Ախալքալաքի սարավանդ |
| 2) Կապուտջուղ լեռ | 6) Ծղուկ լեռ |
| 3) Ծաղկանց լեռներ | 7) Բյուրակնի լեռնազանգված |
| 4) Աչքասար լեռ | 8) Գեղամա լեռնազանգված |

44

Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով.

- 1) Կանադա
- 2) ԱՄՆ
- 3) Չինաստան
- 4) Ռուսաստան

ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 2) ՀՀ-ում կլիմաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 3) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 4) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
- 5) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
- 6) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):

Բ մակարդակ

46

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գնդաձևության շնորհիվ հասարակածից դեպի բևեռներ ջերմությունն աստիճանաբար նվազում է:
- 2) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը բևեռային շրջաններում «փքվել է», իսկ հասարակածում՝ սեղմվել:
- 3) Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող գուգահեռականն ընդունված է անվանել հասարակած:
- 4) Երկրագնդի ամենամեծ շրջագիծը գլխավոր միջօրեականն է:

47

Ո՞ր լայնություններին են բնորոշ ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման մարզերը.

- 1) արևադարձային և բարեխառն լայնություններին
- 2) հասարակածային և արևադարձային լայնություններին
- 3) արկտիկական և արևադարձային լայնություններին
- 4) բարեխառն և հասարակածային լայնություններին

48

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:
- 2) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:
- 3) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:
- 4) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:

49

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տորնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 2) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 3) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 4) Մուսսոնային կլիմա ունեցող շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:

50

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բրազիլական սարահարթում գերիշխում են սառցադաշտերի գործունեությամբ առաջացած մակերևույթի ձևերը:
- 2) Աֆրիկյան պլատֆորմը զբաղեցնում է միայն մայրցամաքի ծայր հյուսիս-արևմտյան նեղ ծովափնյա մասը:
- 3) Անտարկտիկական Անդերը ալպյան հասակի լեռներ են:
- 4) Ավստրալական պլատֆորմը արևելքից եզրավորված է երիտասարդ ծալքավոր լեռներով:

51

Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.

- 1) ԱՄՆ-ը և Գերմանիան
- 2) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 3) Չինաստանը և Մոլդովան
- 4) Ճապոնիան և Կորեան

52

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 2) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
- 3) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
- 4) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:

53

«Անասնապահության ճյուղ — առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) խոզաբուծություն — Թուրքիա
- 2) մսատու անասնապահություն — Արգենտինա
- 3) կաթնային անասնապահություն — Ալժիր
- 4) ոչխարաբուծություն — Ֆինլանդիա

54

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Յուրացված ու բերրի տարածքներից է Հարավկասպիական դաշտավայրը:
- 2) Անապատային, կիսաանապատային ու լեռնային շրջաններում զբաղվում են ոչխարաբուծությամբ:
- 3) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 4) Ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, ռոբոտներ արտադրող առաջատար երկիր է:

55

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աճեցվող հիմնական հացահատիկային մշակաբույսը բրինձն է:
- 2) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթրն է:
- 3) Բնորոշվում է բնակչության պարզ վերարտադրությամբ:
- 4) Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ է ջեկերի բաժինը:

56

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:
- 2) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
- 3) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
- 4) Հայկական լեռնաշխարհն արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:

57

Ընտրել «գետ — վտակ» համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------|-----------|
| 1. Դերեղ | ա. Գետիկ |
| 2. Աղստև | բ. Քասաղ |
| 3. Արփա | գ. Փամբակ |
| 4. Մեծամոր | դ. Եղեգիս |

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-գ
- 2) 1-ա, 2-բ, 3-ա, 4-գ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

58

ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունն ամենաբարձրը.

- 1) մինչև 1000մ
- 2) 1500–2000 մ
- 3) 1000–1500 մ
- 4) 2000–2500 մ

59

«Հանքավայր — օգտակար հանածո» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Սվարանց — երկաթաքար
- 2) Ագարակ — պղնձամոլիբդեն
- 3) Կապան — պղնձամոլիբդեն
- 4) Շվանիձոր — նեֆելինային սիենիտ

60

Վայոց ձորի մարզի համար ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
- 2) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
- 3) Բնական անտառների զբաղեցրած մակերեսը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է:
- 4) Տարածքում հայտնաբերվել են պղնձամոլիբդենային հարուստ հանքավայրեր:

61

ՀՀ տրված լճերի համարները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ.

- 1) Արփի
- 2) Սև
- 3) Քարի

62

Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- | | |
|------------|-------------|
| 1) Ախթալա | 5) Ալավերդի |
| 2) Սոթք | 6) Քաջարան |
| 3) Կապան | 7) Ագարակ |
| 4) Շամլուղ | 8) Արարատ |

63

Գրել այն երկրների համարները, որտեղ բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է.

- | | |
|--------------|--------------|
| 1) Կամերուն | 5) Տաջիկստան |
| 2) Անգոլա | 6) Ճապոնիա |
| 3) Հնդկաստան | 7) Նիգեր |
| 4) Բանգլադեշ | 8) Նորվեգիա |

64

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-------------|-----------------|
| 1) Ճապոնիա | 5) Կանադա |
| 2) Լեհաստան | 6) Նոր Զելանդիա |
| 3) Իրան | 7) Արգենտինա |
| 4) Գերմանիա | 8) Ուկրաինա |

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40° -ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 70° -ի: Որոշել քաղաքների ամենակարճ հեռավորությունը կիլոմետրով:

(66-67) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ:

66 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

67 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

(68-69) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝ $-1^0, -4^0, -6^0, -2^0, 7^0, 16^0, 10^0, 4^0$:

68 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

69 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 2) ՀՀ-ն իր հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
- 3) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
- 4) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
- 5) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
- 6) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում: